



ՀՀ, Երևան 0010, Կառավարական 3-րդ մասնաշենք,
Հայաստան համահայկական հիմնադրամ
Հասարակութեան հետ կապերու բաժին
Հեռ: + (374 10) 521505
pr@himmadram.org
www.himmadram.org

Մամուլի հաղորդագրություն

«Հայաստան» համահայկական հիմնադրամը Ղուզէ Ճարտար գիւղին մէջ մանկապարտէզ կը կառուցէ

Երևան, Յուլիս 13, 2010 թ.: Սոյն թուականի Յունիս ամսուն «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսայի տեղական մարմինի եւ լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կառավարութեան համատեղ աջակցութեամբ մեկնարկած է ԼՂՀ Մարտունիի շրջանի Ղուզէ Ճարտար գիւղին մէջ մանկապարտէզ կառուցելու նախագիծի իրագործումը: Ծրագիրը կ'իրականանայ «Լիւտենտո Կրուփ» ընկերութեան նախագահ Ժան-Միշէլ Կրինպերկի եւ «Պերէնիք եւ Երեւիա» ընկերութեան նախագահ Միշէլ Փագումեանի կատարած նուիրատուութիւններուն շնորհիւ, իբրեւ յիշատակ «Հայաստան» հիմնադրամի բարերար Էմմանուէլ տը Լապարիի, ով իր կեանքի վերջին տարիներուն գործօն մասնակցութիւն եւ մեծ ներդրում ունեցաւ հիմնադրամի Արցախի մէջ ձեռնարկած նախագիծերու իրագործմանը:

Ներկայիս մանկապարտէզը կը գործէ գիւղի նախկին դպրոցի շէնքին մէկ բաժինին մէջ, որ հիմնուած է քսաներորդ դարի երեսունական թուականներուն:

Նախագիծի իրագործման աշխատանքները կ'ընթանան մեծ արագութեամբ: Այժմ մանկապարտէզի նոր շէնքին հիմքը կառուցելու խնդիրը համարեա՛ լուծուած է: Կը նախատեսուի շէնքին առաջին եւ երկրորդ յարկերը յատկացնել հանդերձարաններ, խաղասենեակներ եւ 80 պզտիկի համար պատրաստուած ննջարաններ կառուցելուն: Գիւղի մանկապարտէզը պիտի ունենայ նաեւ խոհանոց, լուացքատուն, բժշկական կեդրոն, ինչպէս եւ ջերմաբաշխ համակարգ, օդափոխութեան համար նախատեսուած եւ հակահրդեհային համակարգեր: Ըստ ծրագիրին նոր շէնքը պիտի ունենայ եւ բացօթեայ խաղադաշտ:

«Մեր երեխաները, ուր ալ ապրին անոնք, մայրաքաղաքին մէջ, թէ հեռու որեւէ գիւղի մը մէջ, արժանի են եւ հաւասարապէս իրաւունք ունին անհոգ եւ գեղեցիկ մանկութիւն մը անցնելու», - ըսաւ «հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրէն Արա Վարդանեանը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը շահոյթ չհետապնդող կազմակերպութիւն է, որը հիմնադրուած է 1992թ-ին, որուն նպատակն է խթանել մարդասիրական գործունեութիւնը եւ տարբեր հաստատութիւններու եւ կառոյցներու մասնաճիւղերու զարգացումը ՀՀ-եան եւ ԼՂՀ-եան մէջ: Հիմնադրամը ունի 18 տեղական մարմին ամբողջ աշխարհի մէջ:

«Գիւղի բնակիչները եւ նա մանաւանդ երիտասարդ ընտանիքները երկարատեւ կը սպասէին այս մանկապարտէզին: Առօրեայ զանազան խնդիրներ, հոգսեր ու պարտատաւորութիւններ ունեցող ծնողներուն համար շատ կարեւոր է եւ էական նշանակութիւն ունի ոչ միայն իրենց պզտիկներուն ապահով եւ վստահելի ձեռքերու մէջ տեսնելը, այլ նաեւ իրենց պզտիկներուն լաւ եւ հաճելի պայմաններու մէջ գտնուիլը»,- ըսաւ մանկապարտէզի տնօրէնը:

Իրագործուող այս նախագիծը հիմնադրամի Ֆրանսայի տեղական մարմինի՝ դպրոցներու եւ մանկապարտէզներու վերականգման ու կահաւորման ասպարէզը ընդգրկող բազմաթիւ ծրագիրներէն մին է: Յիշեցնենք, որ 2004 թուականէն, Ֆրանսայի տեղական մարմինը առաւել համակարգուած եւ նպատակաւորուած կ'իրականացնէ կրթական հաստատութիւններու կահաւորման ծրագիրները: Միայն 2009 թուականին, ֆրանսաբնակ հայերու աջակցութեամբ եւ հովանաւորութեամբ, Հայաստանի եւ Արցախի մէջ 103 դպրոց ստացած է նոր կահոյք եւ անհրաժեշտ գոյք, այս կերպ աւելի քան 10 000 աշակերտ ապահովելով յարմարաւետ եւ գեղեցիկ կահաւորուած դասարաններով: Մինչ օրս, Ֆրանսայի կառավարութեան եւ Ֆրանսայի հայկական համայնքի շնորհիւ 26 000 աշակերտ դպրոցներու եւ մանկապարտէզներու մէջ ապահովուած է նոր կահույքով:

«Հայաստան» համահայկական հիմնադրամ
** նշել արբիւրը*

